

ՄԻԷՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԼԷՊ, 16 ՅՈՒՆԻՍ, 1929

ԹԻԻ 12

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (2)

Ունէ երկու կամ աւելի անհատներու կամ մարմիններու միջև միութիւն մը հաստատուելու համար անհրաժեշտ է հասարակաց գետին մը պատրաստել. այս կրնայ ըլլալ հասարակաց գաղափար որ բոլորին միտքերուն վրայ իշխէ, հասարակաց նպատակ մը որ բոլորը իրեն իրագործութիւն համար գործունէութեան մղէ, կամ միծ անձնաւորութիւն մը որ բոլորին սիրտերը իրարու կապէ և ալին: Նմանապէս, անպատճառ պէտք է գտնել ունէ հասարակաց գործող կապ մը ունէ երկու կամ աւելի եկեղեցիներու միջև: միութիւն մը հաստատուել կարենալու համար:

Այս հասարակաց գետինը գտնելու համար նախ պէտք է քննել շահագրգռուող կողմերու արժէքները անաչառ գնահատումի և յարգալիք վերաբերումի հոգիով մը: Իրական արժէքները միայն իրեն վերապահել, բոլոր ճշմարտութիւնը միայն իրեն յայտնուած նկատել՝ ունէ մէկ եկեղեցին կը մղէ սնամէջ հպարտութեան և տոնուազն ոչ-յարգալիք վերաբերումի ու իշխանութեան հանդէպ: Այսպիսի մտայնութեան տէր ունէ եկեղեցի մը միութիւն ըսելով կը հասկնայ ձուլում, կամ իրեն միանալու պարզ հրաւեր մը:

միւս կողմին ուղղուած, որ պատասխանելով այս կոչին խոստովանած պիտի ըլլայ թէ իր ենթագործալ արժէքները մոլորամտութիւններ են միայն: Ցաւալի է ըսել թէ շատ մը հին և նոր եկեղեցիներ յաճախ այսպիսի հակաքրիստոնէական ոգի մը ցուցուցած են, պատճառելով երկպառակութիւն, մոլեռանդութիւն եւ ատելութիւն: Այսպիսի մտայնութիւն մը, սակայն, անկարելի կը դարձնէ միութիւնը:

Հայ Առաք. Եկեղեցիին հանդէպ մեր անվերապահ յարգանքը յայտնած ենք միշտ այս էջերուն վրայ:

Հայց. Եկեղեցին զարեւակ հոգեւոր ներշնչարանը եղած է հայ սիրտերուն, որոնք անոր խորհրդաւոր պաշտամունքի ձեւերովը բաւականաչափ սրունդ ստացած են կեանքի զառնութիւնը անմիջական ճաշակելու, հոգեկան տաղնապները խաղաղ սրտով դիմադրաւելու: Հայց. Եկեղեցին զարեւակ հայուն միակ ապաւէնը եղած է իր դէպ ի Գողգոթա՝ զնացքին զանազան կայաններուն մէջ, գտնելով միութարութիւն և նոր կտրով:

Բրիտանացիութեան Հայաստան մուտքէն անմիջապէս վերջ Հայ Եկեղեցին ցուցուցած է արդիւնաւոր աւետարանական դործունէութիւն շրջակայ եր-

կիրներու, մանաւանդ կովկասի լեռնա-
կաններուն մէջ, տարածելով աւետա-
րանի լոյսը անոնց մէջ:

Արեւելքի մէջ Աւետարանի գործա-
լիր պահապանը եղած է Հայց. Եկեղե-
ցին խաւարի բոլոր դարերուն մէջ, յա-
ճախ անգին հոգողութեամբ, հակառակ
հիմնաքանդ աւերներու, բարբարոսա-
կան սարսափներու, որոնց թաւրը ե-
ղաւ Հայ Աշխարհը:

Պարզապէս հրաշք մը պէտք է նկա-
տել սա պարագան՝ թէ Հայց. Եկեղեցին
զարմանալի առկունութեամբ, յամասու-
թեամբ և երբեմն ճկունութեամբ իր ան-
կախ գոյութիւնը կրցած է պահել, հա-
կասակ դառն, յուսալքիչ, պառակտիչ
սաստիկ յարձակումներուն և ներխու-
ժումներուն՝ այլադասան քոյր եկեղեցի-
ներու և այլակրօն ազգերու կողմանէ
կատարուած: Վեհատեսիլ: Մասին
նման ան կրցած է իր անջատ ինքնու-
րոյնութիւնը պահել, իր աշխփառ գլուխը
մրկալիւր ամպերու մէջէն վեր ցցելով:

Հայ Գրականութեան և Հայկական
գպրոցին զոյգ հիմնաքարերը զրուած են
Հայց. Եկեղեցին կողմանէ: Աւետա-
րանը ժողովուրդին հասկցած լեզուով
տարածելու և սովորեցնելու համար Սա-
հակ և Մեսրոպ զոյգ հանճարներ,
հնարեցին Հայ այբուբէնը, հայացուցին
Ս. Գիրքը և գպրոցներ բացին հայ մա-
նուկները կրթելու համար: Ատէի վեր
մինչև մօտերս հայ եկեղեցականը եղած
է հայուն զրեթէ միակ ուսուցիչը և զը-
րագէտը: Հայ գրականութիւնը մինչև
ժ.թ. դարու սկիզբը, քիչ բացառու-
թեամբ, հայ եկեղեցականին կը պար-
տինք զրեթէ:

Հայ կեանքին բոլոր մարդերուն մէջ
օտար ազգացութիւնները այնչափ խոր
թափանցած են որ անոնք զրեթէ կոր-
սնացուցած իրենց բնատոհմիկ երևոյթը:

Հայը թէ իր բնաշխարհին և թէ օտար
հորիզոններու աակ գարեւր շարունակ
այնքան մեծ թիւով այլալեզու, այլացեղ,
այլակրօն ազգերու հետ յարաբերութիւն
ունեցած և յաճախ անոնց գերիշխանու-
թեան աակ եղած է, որ բնական կերպով
կամ հարկադրուած փոխած կամ մոռցած
է իր շատ մը ընկերային սովորութիւն-
ները: Իտէալները և այլն: Բայց Հայց.
Եկեղեցին, ընդունելով հանգերձ թէ
ինքն ալ խոր զրոյմը եւ ազգեցութիւնը
կը կրէ Ասորի, Յոյն և Հռոմէական ե-
կեղեցիներու, տակաւին ան կը պարու-
նակէ գորաւոր կորիզ մը որ գուտ հայ-
կական է, և որ բաւական է ստեղծելու
հայուն սրտին խօսող միջավայր մը:

Նշանակելի պարագայ մըն է նաեւ
սա իրականութիւնը՝ թէ Հայց. Եկեղե-
ցին բոլոր հին եկեղեցիներու մէջ էն
ալատամբուն և ժողովրդայինը եղած է
իր վարչական զրութեամբը և կրօնական
վարդապետութիւններովը:

Պէտք չկայ աւելի հետնները երթալ:
Վերոյիշեալ արժէքները բաւական են
պարտադրելու բոլոր անկեղծ և ճշ-
մարտաւէր հոգիները, որ յարգանքով
յիշեն Հայց. Եկեղեցւոյ անունը, գուր-
գուրալիւ վերաբերում մը ունենան, ու
կարեկից հոգի մը աւածեն անոր հանդէպ:

Ինչ փոյթ թէ կորսնցներք մեր աշ-
խատութիւնները, կորսնցներք մեր ծը-
րագիրները և ձեռնարկներն, կորսնցը-
նենք մեր հիմնարկութիւններն, կորսն-
ցնենք նոյն իսկ մեր եկեղեցին, բաւ է
որ այս սրբազան աւերակներուն վերեւ
ճշմարտութիւնը որ անկորնչելի է, կա-
րենայ բարձրացնել իր ճակատը մաքուր
և անբիծ...:

ՂԵՒՈՆԴ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՈՐԴԻԱԿԱՆ ՍԷՐ

Հիմայ կուզանք որդիական սիրոյն՝
 ծնողաց հանդէպ: Այս սէրը բացառա-
 պէս լուրջ ճշմարտութեամբ կ'անցունէ ներ-
 կայիս: Ռամիւզարական եւ բաները
 հարթ հաւասար ընող հոսանքը պատ-
 ճառ եղաւ որ զաւակները սովորին իրենց
 ծնողաց հետ վարուել իր հաւասար եւ
 իբր ընկեր: Գարաւիւրի վիպագիր մը
 մէջ կը բերէ իրիտասարդ մը որ կ'ըսէ իր
 հօրը. «Ես եմոր քու հայրդ եմ»: Տա-
 րօրինակ մտայնութիւն, որ մահողիչ
 է իսկապէս: Թէ լաւ է որ ծնողք եւ
 զաւակներ փոխադարձաբար մօտենան
 իրարու, ո՛չ ոք կը հակառակի ատոր:
 Բայց ներողութիւն, չառ հետուն չեր-
 թանք, ծնողք ծնողք են եւ այնպէս կը
 մնան. Աստուծոյ հեղինակութիւն մը
 ստացած են անոնք որ պարտք կը դնէ
 մանկան վրայ՝ պատուել իր հայրն ու
 մայրը, այսինքն սիրել զանոնք՝ յար-
 գելով, եւ յարգել՝ սիրելով: Խիստ չա-
 փազանց ընտանութիւն մը, ապերասան
 ազատութիւն մը, ծնողաց եւ զաւակնե-
 րու յարաբերութեան մէջ՝ վտանգաւոր
 պիտի ըլլար: Պէտք է զաւակները յի-
 շեն թէ ինչեր կը պարտին իրենց ծնո-
 ղաց, պէտք է մտածեն թէ ինչեր ըն-
 դունած են անոնցմէ: Եւ թէ հակառակ
 իրենց ինքնավստահութեան, վերջապէս
 իրենք չունին իրենց ծնողաց փորձա-
 րութիւնը, զէթ տարիքի բերումով:

Բայց թերեւ անոնք պիտի ըսեն թէ
 յուսախար եղած են իրենց ծնողքէն,
 թէ անոնց մասին ունեցած երբեմնի ըմ-
 բռնումները ի դերեւ ելած են: Կրնայ
 ըլլալ. Աս ծնողք ըստածները, որ ինչ
 ալ ըլլայ, իրենց ծնողքն են, երբէք
 չեն ըսած թէ կատարեալ են իրենք:
 Երբոր զաւակները իրենք ալ հայր եւ
 մայր ըլլան կը հասկնան օր մը թէ որ-
 քան զժողովրդին է զաւակ մեծցնելը:

Շատ յաճախ մարդիկ երբ չաւտի կ'ու-
 նենան տ'ն առնեն կը զնահատեն իրենց
 ծնողքը եւ անոնց յարգը կը ճանչնան:

Ի՞նչ ընել ուրեմն:— Սիրել չանոնք, այս
 ծնողք ըստածը, այնպէս ինչպէս որ են
 որքան ալ որ անկատար ըլլան, մահա-
 լանց որ անոնց համար աւելի զժողով-
 րդած է իրենց պարտականութեան
 կատարումը. յետոյ՝ իրենց գործակից-
 ները եւ ձեռնառնները ըլլալը. այս կեր-
 պով կարելի ըլլայ թերեւս գոհացնել ծն-
 ողաց հաւասարելու միտումը որ կայ
 տղոց մէջ:

Զարմանալի չէ՞ Պօղոսի գիտողութիւ-
 նը թէ հինգերորդ պատուէրը, «Պատուէ
 քու հայրդ ու մայրդ» Տասնորանկալի
 շարքին առաջինն է որ խոստում կը պա-
 րտենակէ. «Որ քու օրերդ երկար ըլլան
 այն երկրին վրայ որ Բու Տէր Աստ-
 ուածդ կուտայ քեզի»: Ինչո՞ւ.— որով-
 հեաւ աս է մեր առաջին պարտականու-
 թիւններէն մէկը եւ ամէնէն կարեւորնե-
 րէն մէկը զոր պէտք է կատարենք: Մեր
 ծնողքը Աստուծոյ ներկայացուցիչներն
 են մեր քով՝ Աստուծոյ հետքը հեղող, եւ
 Աստուծոյ յետոյ անոնց կը պարտինք
 ինչ որ ենք եւ ինչ որ ունինք: Զանոնք
 պատուել, կը նշանակէ զանոնք յարգել
 եւ զանոնք սիրել, թէ՛ մեր խօսքերով,
 թէ՛ մեր գործերով եւ թէ մեր ամբողջ
 գիրքով անոնց հանդէպ, իրենց կեան-
 քին ընթացքին եւ իրենց մահէն հետք
 պատուելով տակաւին անոնց յիշատակը:
 Կարելի է ըսել թէ ան որ իր ծնողքը կը
 պատուէ ինքզինքը կը պատուէ, իսկ
 ինքզինքը կ'անպատուէ մէկը երբ որ այլ-
 եւս չի պատուեր իր ծնողքը, երբ կը լքէ
 զանոնք ու նոյնիսկ կը նախատէ: Հոս
 եւ Աստուծոյ մեղի ներշնչած սէրը պի-
 տի օգնէ յաղթելու բոլոր այն զժողով-
 րութիւններուն որ մեղի կը հանդիպին
 ծնողաց հետ մեր ունեցած յարաբերու-
 թեան մէջ:

Ժընև

ԹԻՊ. Վ. ՊԵԼԵԱՆ

ԱՂՕԹՔԸ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆՁՈՒԹԻՒՆԸ
ԱՍՏՈՒԱՃՍԻՐՈՒԹԵՆ. ԱՐԴԻՒՆՔՆԵՐ ԵՆ

Յիսուս իբր հոգևոր կեանքի կանոնը և բարոյական օրէնքի լրումը սորվեցուց թէ պէտք է սիրել զԱստուած բոլոր սրբաւէն եւ զբային իր անձին պէս: Այս վարդապետութիւնը աւելի մարդուն բընութեան մէջ թաքնուած կանոն մըն է քան թէ արտաքին հրաման մը: Մարդ կը սիրէ զինքը սիրողը, ով որ ալ ըլլայ ան, եւ զինքը սիրողին սիրոյն համար անոր սիրածն ալ կը սիրէ:

Ինչպէ՞ս պէտք է ապրիլ այս երկու հրամաններուն համեմատ: Մարդ իր սիրածին կարեկից կը զտնուի անոր հետ մեծ հաշտութեամբ եւ սեռական հաղորդակցութեամբ եւ մեծ գոհաբերութեամբ: Այս կը նշանակէ որ Աստուած ամէն մէկ հաւատացեալէն կ'ակնկալէ մեծամասն հաղորդակցութիւն եւ կարեկցութիւն: Աստուծոյ հետ յարաբերութիւնը կը յայտնուի աղօթքի միջոցաւ, Անոր հանդէպ կարեկցութիւնը՝ աւետարանչութեամբ: Նմանապէս զբային հանդէպ սէրը կ'արտայայտուի անոր հետ ընկերակցութեամբ եւ անոր ջոյց տրուած համակրութեամբ: Ուրիշ ինչպէ՞ս կարելի կ'ըլլայ որ զԱստուած սիրող մարդ մը չկարգայ Ս. Գիրքը, որ Աստուծոյ հաւանքն է, եւ թէ սովորութիւն չունենայ աղօթելու, որ Աստուծոյ խօսիչն է: Դարձեալ, Աստուծոյ կարեկից եղող մարդ մը անպատճառ իրեն համար կարելի միջոցներով աւետարանը պիտի քարոզէ. քանզի աւետարանչութիւնը միջոց մըն է, որ երեսն պիտի հանէ Բրիտանիոյ հոգւոյն ջանքին արդիւնքը: Նոյնպէս այն անձը որ իր զբային հետ սուրբ սիրոյ կանոնին համեմատ կը վերաբերի, անոր ցաւակից եւ բոլոր պարագաներուն մէջ կարեկից կը գտնուի: Այս կարեկցութիւնը աժան բան մը չէ, այլ յաճախ կը պակասեցի անձնուրացութիւն եւ գոհարարութիւն: Հաւատացեալը պէտք է անոր յօժարի:

Անցեալ օր մարդու մը մասին կարգացի, որուն վրայ պատմելով միտքս աւելի լաւ հասկցուցած կ'ըլլամ:

Քարոզիչ մը իր զիրքը կորսնցուցած էր, քանզի փրկիքապէս տկար և յաճախ հիւանդ ըլլալով չէր կրնար իր պաշտօնը կատարել: Պատրաստ դրամ չունէր և ոկսաւ տառապիլ: Բայց ան նախկինէն աւելի Աստուծոյ մօտեցաւ, բոլոր հոգերը Անոր վրան թողուց և հրամանին համեմատ աղօթելու շարունակեց. բայց իր հանգիստ եղած պահերուն միշտ առիթ կը գտնէր իր զբային երեսն, հիւանդանոցներուն և բանտերուն մէջ բարին խօսելու Յիսուսի և Անոր փրկութեան մասին: Տնտեսապէս էն տաղնապալից ժամանակին առանց ստորագրութեան նամակ մը ընդունից, որուն մէջ իր հրամանին վճարելի յիսունական տուարնոց երկու փոխանակագիրներ կային: Մինչ քարոզիչը կը խորհէր թէ՛ այս դրամը ի՞նչպէս պիտի ծախսէր, իրենց մէկ աւելի թշուառ ընտանիք մը յիշեց եւ անմիջապէս փոխանակագիրներէն մէկը անոնց զրկեց և միւսը շնորհակալ, երախտագէտ և խոնարհ հոգիով մը իրեն պահեց: Իր այս վարմունքը Աստուծոյ շատ հաճելի թուած պէտք է ըլլայ: Ճիշտ այդ օրերուն մարդ մը իրեն գալով ըսաւ. «Կը տեսնեմ որ դուն շատ կը տկարանաս, կը փափաքիմ որ մէկ ամսուան համար յարմար տեղ մը օգտփոխութեան երթաս. եւ կարծեմ այսչափ դրամ մը քեզի կը բաւէ:» Եւ անմիջապէս իր ձեռքին մէջ դրաւ որոշ գումար մը: Քարոզիչը շատ ուրախացաւ, բայց անմիջապէս յիշեց իր յաճախ այցելած մէկ հիւանդը, որուն մօտեհրա բժշկը ըսած էր թէ իրեն համար ալ դարման մը չունի և իր միակ յօյրը օգտփոխութեան մէջ է: Անմիջապէս առանց վարանումի ստապէս ըսաւ դրամը տուողին. «Այսինչ մարդը ինձմէ շատ աւելի պէտք ունի օգտփոխութեան, եթէ քեզի ալ հաճելի

երեւնայ աւելի լաւ չէ՞ որ այս գրամը անոր տանք:» Նուիրատուն այնչափ կ'ազդուի այս անձնուէր քարոյիչէն որ նոյնչափ գումար մ'ալ անոր տալով կ'ըսէ: «Շատ զոհ եղայ որ այդ հիւանդին մասին ինծի ծանօթութիւն տուիր, չաա լաւ կ'ըլլայ եթէ երկուքնիւ միասին կ'երթաք:» Այս մարդը թէ՛ ճոխութեան մէջ և թէ նեղութեան մէջ կրցած էր իր բոլոր սրտէն սիրել Աստուածը և իր անձին պէս սիրել իր զրադին:

Օր մը իր կիներ իրենց բոլոր պէտքերուն մէկ ցանկը իրեն կարդալով ըսաւ. «Զմուռ կը մօտենայ, ասոնց ամէնն ալ պէտք են, ի՞նչ պիտի ընենք:» Մարդը այսպէս պատասխանեց. «Մեր Հայրը հարուստ է, մեր խնդրելէն առաջ Ան մեր պէտքերը զիտէ և յարմար առեանին զանոնք կը հոգայ:»

Ճիշդ այդ օրերուն իր մէկ բարեկամէն նամակ մը կ'ստանայ. որուն մէջ ան կը հարցնէր իր կացութեան և տարուստին մասին: Այս նամակին պատասխանը թղթատարին յանձնելու համար զայցած ատեն, ճամբան փաստարանի մը հանդիպեցաւ, որ զինքը կեցնելով ըսաւ. «Կը յիշե՞ս թէ ասկէ ամիս մը առաջ այսինչ հիւանդանոցին մէջ հարուստ հիւանդի մը Յիսուսի մասին խօսեցար: Տասնը հինգ օր առաջ մեռաւ այդ մարդը, որ իր բոլոր հարստեան խրճատակալը կտրած է ինչ. ահա բոլոր վաւերաթուղթերը քովս են, որոնց համեմատ այսինչ գրամատունը քու հրամանիդ տակն է.» և ապա յարեց. «Հակառակ 15 օրէ ի վեր մեր ըրած բոլոր ծանուցումներուն իր ոչ մէկ մօտիկ ազդականը երեւան եկաւ:» Բարի լուր մը չէ՞ այս: Այս ատեն քարոյիչը զարմացած բարձր ձայնով կը փառաբանէր զԱստուած:

Ահա ձեզի ախտաժէտ և իր զործը կորսնցուցած մարդ մը, որ սակայն զԱստուած սիրող մը և Բարի Սամարա-

ցիին այսինքն Յիսուսի հետեող մըն է միևնոյն ատեն, եթէ այսպիսի մարդ մը կարող կ'ըլլայ իր բոլոր սրտէն սիրել զԱստուած և իր անձին պէս սիրել իր զրադին, մեզմէ ո՞վ անոր կրցածը չի կրնար կատարել:

Ո՞վ գութ, որ սովորութիւն չունիք աղօթելու, Ս. Գիրք կարդալու, Աստուծոյ և զրադին կարեկցութիւն ցուցնելու, ի՞նչ կ'երպով պիտի զգաք եւ պիտի արտայայտէք թէ հոգեւոր կեանք մը կ'ապրիք: Եւ եթէ գութ ալ որոշ կերպով կ'զգաք թէ հոգեւոր կեանք մը չէք ապրիր, այդ աւելի՛ գէշ վիճակ մ'է, Աստուծոյ հանդէպ աւելի՛ մեծ ապերախութիւն մ'է: Զինքը սիրողը չը սիրել ընտելեան հակառակ բան մըն է, իր ներսը գտնուող աստուածային ձայնը խեղդել է. քանզի Աստուած մեզ փրկեալու է մինչ մենք չէինք փնտռել, Ան մեզ սիրած է մինչ մենք չէինք սիրել և նոյնիսկ թշնամի էինք Անոր: Քանզի Աստուծոյ և մարդու միջև եղող այս սիրոյն սկզբնաւորութիւնը մարդու կողմանէ կղած չէ, այլ Աստուծոյ կողմանէ: Յովհ. առաքեալ իր առաջին թուղթին (4.12-13) մէջ ճիշդ նոյնը կը փաստէ:

Ո՞վ գութ, որ Աստուծոյ հետ այս սիրոյ յարաբերութեան սկսելէ, կամ այդ յարաբերութեան մէջ ատեն մը շարունակելէ վերջ զաղրած էք, առիթէն օգտուեցէք մինչ Աստուած տակաւին կը սիրէ. քանզի հունձքի յարմար ատենը անցնելու և իւզը հատնելու վրայ է: Թերեւս կը վարանիք խորհելով թէ ի՞նչ պէս պէտք է սկսիլ: Սկսելու համար ապահովագոյն միջոցն է Աստուծոյ սիրոյ նամակները կարդալ եւ Յիսուսի կեանքը ուսումնասիրել: Աղօթքը ասոր հետ միասին կ'երթայ: Եթէ իրապէս սկսիլը յարմար կը նկատես մէկ շաբաթի համար կարդալիք նամակներուց ցանկը տամ, որ հետեւեալն է.— 1), Ա. Կորնթ. 13.1-13: 2), Հռովմ. 5.1-12: 3), Դկ.

15.1.11: 4), Ղուկ. 15.11-32: 5),
Հովհ. 8.28-39: 6), Եսայի 1.1-20:
7), Եսայի 55.1-13:
Տիֆլիզի

Հ. ԿԵՕՎԿԱԼԱՅՃԵԱՆ

ՄՈՎՍԻՍԱԿԱՆ ՕՐԷՆՔԻ ԻՄԱՍՏԸ

Թէ Համուրապիի և թէ ներկայիս աշխարհի վրայ իզօրու եղող օրէնքներուն նպատակն է՝ որոշել մարդոց իրարմէ պահանջած իրաւունքները եւ մասամբ ալ իրարու հանդէպ ունեցած փոխադարձ պարտականութիւնները:

Մովսիսական Օրէնքը տրուած է որոշելու մարդուն ներքին կեանքը, մարդոց փոխյարաբերութիւնները, ասկէ ալ աւելի իւրաքանչիւր անհատին միւսին հանդէպ պարտականութիւնները և մարդուն Աստուծոյ հետ յարաբերութիւնը և Անոր հանդէպ պարտականութիւնները, որ մարդը երջանիկ ըլլայ: Այն որ այս կանոնները չի գործադրել ինքը պիտի պատժուի:

Տասը պատուիրանքը ուսումնասիրենք այս տեսակէտէն:

1. «Ինծմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս»: Մարդը Աստուծոյ մէջ գոյ է: Բոլոր օրէնքները կ'ենթադրեն որ Աստուած և մարդ իրարմէ անկախ, անջատ գոյութիւններ են: Բայց այս օրէնքը կ'ենթադրէ թէ մարդը Աստուծոյ սրտին մէջ է, Ան կը խորհի մարդուն վրայ և կը սիրէ զայն:

2. «Քեզի կուռք չչինես»: Այսինքն մարդ կը ճանչնայ իր Աստուածը: Ուէ տեղի մը սահմանուած բան մը կամ աւարկայ մը չէ Աստուած: Աստուած քեզի կը նմանի, որովհետեւ դուն Անոր կը նմանիս: Աստուած զգացում ունի, կը սիրէ և սիրուիլ կուզէ. Ան կը ճանչնայ եւ կը ճանչցուի. մեղքէն կը դարձի եւ կը պատժէ զայն եւ սիրողները կը վարձատրէ: Քու անձնաւորութենէդ կրնաս սորվիլ զԱստուած:

3. «Տէրոջը, քու Աստուծոյդ, անունը պարպ տեղ բերանդ չ'առնես»: Մարդը Աստուծմէ անկախ չէ, այլ Անոր պատասխանատու է: Ամէն մէկ խօսքդ եւ կեանքիդ ամէն մէկ շարժումը պէտք է փառաւորէ զԱյն:

4. «Հանգստութեան օրը սուրբ պահէ եւ այն օրը գործ մի՛ գործեր»: Այսինքն քու ապրուստդ քու ձեռքովդ եւ միտքովդ չ'ապահովուիր: Մարդուն նիւթական պէտքը միայն Աստուծմով կը գոհացուի:

5. «Պատուէ քու հայրդ ու մայրդ»: Ընտանեկան երջանկութիւնը կարելի է ծնողական եւ որդիական փոխադարձ պարտականութիւններու կատարումով բերել:

6. «Սպաննութիւն մի՛ ըներ»: Դրացիին կեանքին պատասխանատու ես:

7. «Շնութիւն մի՛ ըներ»: Դրացիին կնոջ հանդէպ պատասխանատուութիւն ունիս:

8. «Գողութիւն մի՛ ըներ»: Դրացիին ինչքին պատասխանատու ես:

9. «Սուտ վկայութիւն մի՛ ըներ»: Դրացիին պատիւին պատասխանատու ես:

10. «Մի ցանկար»: Ներքին կեանքը, սրտին վիճակը երաշխաւորն է անձնական երջանկութեանդ եւ աշխարհի խաղաղութեան:

Իսրայէլի ժողովուրդը ա՛յս օրէնքը ընդունեցին: Քահանաները անապատի մէջ 40 տարի իրենց գլուխներուն վրայ կրեցին և ժողովուրդին առջևէն տարին զայն: Աշխարհը 3000 տարիէ ի վեր այս աստուածային օրէնքը սկզբունքով ընդունած է: Այս տասնաբանեայ կանոնները աստուածային օրէնքին լրումը չեն այլ անոր սկզբնաւորումը: Այս օրէնքին նկատողութեան առած նիւթերն են հետեւեալը. —

1. Աստուած սրտին մէջ է, եւ Անոր գործը սրտի գործ է:

2. Աստուծմէ՛ զատ ոչ մէկ բանը մի՛ պաշտեր:

3. Մաքուր եղիր: Երբ սխալ մը գործես մի՛ ճաշեր մինչեւ որ զայն չը շտկես:

4. Եթէ Կիրակի չկայ պաշտամունք չկայ, եթէ պաշտամունք չկայ կրօնք չկայ, եթէ կրօնք չկայ բարոյականութիւն չկայ, եթէ բարոյականութիւն չկայ ա՛լ ուէ բան չկայ:

5. Ծնողքդ պատուէ, այս ընելով բոլոր տառապանքը կ'անհետացնես:

6. Դրացիդ սիրէ եւ քու կեանքդ կը փրկես:

7. Մի՛ ընդունիր այն դրամը կամ հարստութիւնը՝ զորոնք ձեռք ձգելու կերպդ չպիտի կրնաս ուրիշներուն պատմել:

8. Յարգէ՛ այն մարդը որ չարիք չի գործեր:

9. Որոշ չգիտցած բանդ մի՛ խօսիր. մի խօսիր այն խօսքը որ օգտակար չըլլար, եթէ նոյնիսկ գիտես զայն. թերեւս Աստուած կը լսէ քու բոլոր խօսածներդ:

10. Ագահութիւնէ զզուացիր. քանզի կեանքին երկայնքը հարստութեան քանակէն կախիս չէ:

Ձախի

ՅԱԿՈԲ ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ԵՐԲ ՍԻՐՏԵՐԸ ԾԱՆՐԱԲԵՌՆՈՒԱԾ ԵՆ

Մենք չառ կարեւորութիւն կուտանք մահուան: Մենք պէտք եղած չափով չենք խորհիր հոգիին եւ անոր յառաջանալու ոյժին վրայ: Երբ մէկը կը նաւարկէ գեղեցիկ Միջերկրականի վրայ չ'ուզիր բաժնուիլ անկէ որուն ափերը կը պատմեն ինչ որ մեծագոյնն է մտդկային պատմութեան մէջ, որուն հովերն ու ալիքները կը բերեն փառաւոր եւ նւիրական յիշատակներ, որուն եզերքը եւ անոնց ետեւը երկարող լեռնաշղթաները մեզի կը ներկայացնեն մարդկային ցեղին շատ մը հիասքանչ դարերը: Ապա, ա-

րեւտեան կողմը ծովը ինքը կ'սկսի նեղնալ, եզերքները կ'սկսի իրարու մերձենալ, եւ ծովագնացը իր ճամբուն վրայ կը գտնէ նեղուցը այնքա՛ն նեղ, առերիւոյթս այնքա՛ն անանցելի, այնքա՛ն նմանող վախճանի: Բայց քանի մէկը կը յառաջանայ ակնախարութիւնը կ'անհետանայ, նեղուցը նեղ է, եւ սակայն մեծագոյն նաւուն անցնելուն համար բաւական լայն. նեղուցը նեղ եւ մշուշապատ է, եւ սակայն վախճան չէ: Անոր մուտքը գտնուող մեծ քարէ անցի՛ր, 36 մը զոններու նեղ կեանքի մը մէջէն քալէ, վեհ-փութկոտութեամբ եւ մեծ վստահութեամբ յառաջացիր եւ ահա նազ պիտի մտնէ աւելի ընդարձակ ծով մը՝ որուն հեռաւոր հորիզոններուն վրայի լոյսէ ճաճանչումները եւ կրակէ եզերքը՝ հեռուէն ձայնող սիրոյ հրաւերը եւ հայրենիքի քաղցր բարեկալութեան կոչն են:

Մեր կեանքը այսպէս է ժամանակի ծովուն վրայ: Անոր հովերն ու ալիքները, հոսանքներն ու ափերը հարուստ են մարդկային սիրոյ գանձերով: Ո՞վ չի սիրեր այս ծովը՝ կազմուած այն էն արժէքաւոր եւ էն երջանիկ բաներէն զոր մարդ չի՛նձ է եւ զոր մարդ կրնայ զիտնալ: Ո՞վ չի սիրեր զայն՝ անոր էն ընդարձակ եւ մեծ եղած առնելը: Ո՞վ գառնութեամբ չի դիտեր անխուսափելի պատկնալը: Եւ քանի տարիքը կը յառաջանայ ո՞վ չ'զգար Լութեան կծկում մը, պզտիկնալ մը, եւ ո՞վ գիտակից չ'ըլլար թէ իր ճամբուն վրայ կայ մահը նեղ եւ վայրենի, թանձրացեալ խաւարի բնակավայրը: Ամէն բանի վախճանը չէ՞ այն, եւ անոր մէջ յաւիտեանս պիտի չկորսնցնենք այս հմայիչ մարդկային աշխարհը:

Ո՛չ: Այդ նեղ անցքին մէջ, մեծագոյն հոգւոյն համար անցնելու բաւականաչափ տեղ կայ: Թող ան երթայ վեհ վստահութեամբ եւ խաղաղ յոյսով: Անզին կայ անհունը, ուր հոգին պիտի նա-

ւարկէ, դարձեալ տեսնելու սրտին տեւական արժէքներն ու գեղեցկութիւնները, դէպի յառաջ քշող հոտանքներու վրայ դիտելու յաւիտենական սիրոյ ողջոյնը եւ շնորհքի անշիջելի լոյսը:»

ՏՐ. Չ. Ս. ՊՐՍՈՒՆԻ

Կրօնականներէն քաղուած
ԹՐԿՄ. Տ. Ճ. Խ.

ՍՈՒՐԲ ՍՍՀԱԿ ԵՒ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

Երբ թուրքիկ եւ հարեւանցի ահաւարիով միսկ պրպտելու ըլլանք հայ ազգային պատմութիւնը կը հանդիպինք ամենամեծ եւ ամենափայլուն գէպքի մը, որ մեր աչքերուն կը ճառագայթէ իր լուսափառ ու լուսաշողջող ցոլքերով:

Այդ գէպքը քրիստոնէութեան արդիւնքն ու պատուին է: Քրիստոսի Աւետարանն ու կրօնքն էր որ հայ կղերականները մղելին գործի ու աշխատանքի, ընելու մեծ գիւտ մը որով հայր պիտի փրկուէր ձուլումի վտանգէն եւ բարբարոսանալու աղէտէն: Այդ գէպքն է հայերէն տառերու պիւտը հինգերորդ դարու սկիզբը, 404ին:

Հայերէն պիւտը եղաւ անմոռանալի եւ եզակի երկու անխոնջ գէմքերու միջոցաւ: Այդ գէմքերն էին Ս. Մեսրոպ Մաշթոց եւ Ս. Սահակ Պարթեւ: Առաջինը Տարօն գաւառի Հացեկաց գիւղէն՝ Վարդան անուն գիւղացիի մը որդին էր: Ան առաջ գինուոր եղաւ, յետոյ արքունիքի՝ գիւանապետ: Հերածարելով այդ պաշտօնէն վարդապետ եղաւ: Երկրորդը՝ աներկեան, գթասէր, բարեգործական ու եկեղեցական շինութիւններու հիմնադիր՝ Մեծն Ներսէսի որդին էր: Ասոնց ծնած թուականնին անյայտ է, սակայն ըստ Կորինի Ս. Սահակ վախճանած կը լինի 438 Սեպտեմբերին, իսկ Ս. Մեսրոպ 439 Փետրուարին: Մաշթոցը՝ աշակերտելով Մեծն Ներսէսի՝ սորված էր ասորե-

րէն, յունարէն եւ պարսկերէն: Իսկ Սահակ Պարթեւ՝ գտնուելով Կեսարիա եւ Բիւզանդիոն՝ կրթուած էր հելլենական ուսումով: Ան աղօթքի եւ հոգեւոր կեանքի հաւատացող մը եւ ապրող մըն էր: «Ս. Բարսեղ Կեսարացիի գլծած կանոններուն ու օրինակին հետեւելով, ան ունեցաւ 60 աշակերտներ, որոնք խառագնագեղս, երկարագլուս, քոլոսկ կ'ապրէին, միշտ աղօթքի հետամուտ էին, կը շրջէին հոգեւոր կերպով միսկթարելու համար ժողովուրդը:» Ուսուցիչ մը ըլլալով հանդերձ քարոզիչ մըն ալ էր, կաթողիկոս ըլլալէ առաջ:

Մեսրոպն ալ վարդապետ ըլլալէ յետոյ իր բոլորաբը կը ժողովէ աշակերտներ եւ կ'սկսի շրջիլ ու քարոզել: Երբ կ'իմանայ թէ Գողթն գաւառին ու Սիւնիաց նահանգին մէջ զիւս կը մնան հեթանոսական հետքեր, հոն կ'շտապէ ընելով այդ տեղերը իր գործունէութեան ասպարէզը: Մեծ յաջողութիւն ձեռք կը բերէ, Սիւնիաց իշխաններէն Յարթեւ եւ Վաղինակ իրեն ձեռնտու ըլլալով:

Այն ատեն հայերէն գիր եւ գիրք չկար: Ժողովուրդը թէեւ հայերէն կը խօսէին եւ սակայն գրականութենէ գուրկ էին: Ասորիւրէնի եւ կամ Յունարէնի ալ տեղեակ չէր ժողովուրդը: Մաշթոցը Աստուածաշունչը հայերէնի կը թարգմանէր ասորերէնէն եւ կը մեկնէր: Նպատակն էր ժողովուրդը լուսաւորել աւետարանի լոյսով եւ վերջ գնիլ հեթանոսական հետքերուն: Շատ կը փափաքէր որ Աստուածաշունչի ճշմարտութիւնները ի յայտ բերուէին նոյնիսկ ժողովուրդին կողմէ եւ սակայն կարելի չէր զիւս: Պակաս մը կար որը պէտք էր լրացուեր: Ընթերցող ու թարգմանիչ Մաշթոցն իսկ շատ մեծ դժուարութիւններ կը քաշէր: Եւ ահա մտահոգութիւն մը պաշարեց զինքը: Խորհեցաւ թէ պէտք է հայերէն գիր եւ հնարուին եւ Աստուածաշունչը թարգմանուելով

ժողովուրդին տրուել, եկեղեցական արարողութիւններն ու երգեցողութիւնները հայերէն ըլլան, որպէսզի ժողովուրդն ալ իրենց բաժինն ու մասնակցութիւնը բերեն: Այս մտահոգութիւնը յայտնեց Սահակ կաթողիկոսին, որը իր կարգին՝ նոյն խորհուրդներով տողորուած՝ քաջալիրեց Մեսրոպը և միանգամայն խնդիրը ներկայացուց թագաւորին՝ Վռամշապուհին: Երեքը իրարու թեթիկունք եղան. Մեսրոպ երկար ճամբորդութիւններէ վերջ, զանազան լեզուներու զիրերէն մեծապէս օգտուելով և նախապէս ազօթած ու Աստուծոյ օգնութիւնը խնդրած լինելով անձանձիր, յաջողեցաւ հնարել հայերէն այրուբէնը և վերադարձաւ Հայաստան: Ուր խանդավառութեամբ ընդունուեցաւ կաթողիկոսին և թագաւորին կողմէ:

Հայերէն գիրերու գիւտէն վերջ կղերականներուն առաջին գործը եղաւ Աստուածաշունչի թարգմանութիւնը, որը իրենց շարժառիթն էր: Զեւնարկեցին մեծ ու կարեւոր գործին եւ կրցան հայերէնի թարգմանել գիրքը այնպիսի խնամով, հոգածութեամբ ու ձեռնհասութեամբ, որ իրենց գործը կրցած է արժանանալ «Թաղուհի թարգմանութեանց» տիտղոսին կամ յորջորջումին:

Հայ լեզուով քարոզութիւնը սկսաւ: Դպրոցներ բացուեցան ուր հայ ուսանող եւ ուսանողուհիներ կրցան հայերէն ուսանիլ: Եկեղեցիներու մէջ Աստուածաշունչը հայերէն լեզուով կը կարդացուէր, արարողութիւններն ու երգեցողութիւնները հայերէն կը կատարուէին ու կ'իրգուէին: Ժողովուրդը՝ հրապուրուած այս մեծ գիւտէն եւ Քրիստոսի կրօնքին ու աւետարանին՝ սկսան շտապել եկեղեցի և լսել Աստուածային պատգամները, սորվիլ կենարար ճշմարտութիւնը և ջանալ ապրելու բարձր մաքուր կեանք մը աշխատելով նմանելու Տէր ու Փրկիչ Քրիստոսին:

Աստուածաշունչի թարգմանութիւնը վերջն էր որ թարգմանուեցան եկեղեցական, կրօնական, փիլիսոփայական ու պատմական գրուածքներ, մեկնութիւններ, ճառեր, յունական ու ասորական գիրքեր: «Ամէն քն ալ», կըսէ պատմաբանը, «Այնպիսի յաջող թարգմանութիւնով որ պատիւ կը բերեն Ոսկեդարի ներկայացուցիչներուն»: Հայ գրականութեան հիմը դրուեցաւ: Այդ երկու յուրբերը իրենց աշակերտներուն հետ կերտեցին Ոսկեդարի գրականութիւնն ու մատենագրութիւնը:

Հայուն գրական լեզուն իսկ եւ իսկ կրօնական եղաւ սկիզբէն: Այդ սուրբերը հայերէն գիրերը գտան որպէսզի գիրութեամբ կարենան տարածել ամէն տեղ Աստուծոյ թագաւորութիւնն ու արգարութիւնը, այդ գործը կրցան զլուխ հանել հաւատալով, վստահելով Աստուծոյ որուն Միածին Որդւոյն Յիսուս Քրիստոսի Սիրոյ Աւետարանը պիտի քարոզէին ամէն տեղ և ժողովուրդին հոգւոյն մէջ պիտի լեցնէին երկնային, Աստուածային սէրը սիրելու գիրար, ապրելու եւ զոհուելու իրարու համար, այնպէս ինչպէս Քրիստոս ապրեցաւ ու պատարողուցաւ բոլոր մարդոց համար:

Հայ գիրերու գիւտը եզակի ու աննման դէպք մըն է, որովհետեւ ան կըրօնքի սիրոյն եւ Աստուածաշունչին համար հնարուեցաւ, որուն նմանը պատմութիւնը չէ արձանագրած իր էջերուն վրայ: Հայերէն գրական լեզուն կրօնական, Աստուածային, Աստուածաշունչի լեզուն է: Հայերէն գիրերը ինչ շարժառիթով գտնուեցան եւ ինչ նպատակի համար, իսկ այսօր ինչ շարժառիթի եւ ինչ նպատակի համար կը գործածուին: Առաջ շարժառիթը եւ նպատակը եղած էր մարդիկը Աստուծոյ մօտեցնել Քրիստոսի միջոցաւ եւ Անոր հետ բարեկամացնել, իսկ ներկայիս է մարդիկը Աստուծոյ հեռացնել նիւթապաշտու-

թեամբ եւ գերի զարձնել նիւթին, բռնի ոյժին: Մին մարդոց սրտին մէջ սէր լեցնելու, իսկ միւսը՝ տառապանք: Առաջինը շինիչ է, երկրորդը՝ քանդիչ:

Պէտք է, ուրեմն, առանց վայրկեան մ'իսկ յապաղելու, ետ դառնանք Ոսկե-դարի Գրականութեան շինիչ, կրօնա-կան ու ազգային շարժառիթին եւ նպա-տակին ու գիտակցինք զիւտին վեհ կո-չումին:

Ազգին վեհագի, բարեպաշտ, փրկա-բար երկու սուրբ անձնաւորութիւնները՝ Ս. Մեսրոպ եւ Ս. Սահակ, թէեւ մե-ռած են եւ սակայն անմահ են եւ անմա-հութեան վկաներ: Որքան երախտա-պարտ է Հայութիւնը անոնց: Մեր ե-րախտագիտութիւնը իսկապէս յայտնած կ'ըլլանք երբ անոնց շաւիղներէն քա-լենք, հետեւելով անոնց առաջնորդը-ռինք Գրիստոսի, հաւատանք Աստու-ծոյ, կտրեւորութիւն տանք կրօնքին, կարգանք Աստուածաշունչը եւ միտք զնենք Լեւոն Բարդին եւ անհատն ու ազգը եւ մարդկութիւնը հրաւիրենք յա-ւիտենական կեանքի, սրբութեան, յայտնութեան, հաւատքի եւ սիրոյ:

Յիկէն

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱՆԸ

Այս գիտական դարուն մէջ սեւեւ մէկ հարցին տրուելիք պատասխանը պէտք է գտնուի իրողութիւններու զիմելով: Արդի գիտութիւնը այս գիմումէն առաջ-նորդուած կարողացած է իր մեծ բաժի-նը բերել մարդկային հանգստութեան մէջ: Հետեւաբար գիտական մեթոտը պէտք է նոյնչափ մարդուն բարոյական եւ հոգեւոր երջանկութեան սատարէ, որ-չափ որ կ'ընէ անոր նիւթական եւ մարմ-նական բարեկեցութեան համար:

Անուրանալի է որ տիեզերքի մէջ Վարչութիւն մը կայ: Կայ բան մը որ բնական օրէնքին զործունէութիւնը,

նիւթի եւ ոյժի կանոնաւոր շրջափոխում-ները կ'որոշէ: Այդ կրնայ ըլլալ «Տիե-զերական Ոյժը», «Աշխարհէս հեռու ե-հովա մը», կամ «Ամենաթափանց Հոգի մը», բայց այդ պէտք է ըլլայ Բան մը: Այն հարցումին թէ «Աստուած մը կա՞», առանց վերապահութեան կը պատաս-խանուի հաստատական կերպով: Բայց հարցը այդ չէ: Մարդ կ'ուզէ գիտնալ նկարագիրը այս Տիեզերական Վարչու-թեան, զոր ստիպուած է ընդունիլ, ի-րեն հաճելի ըլլայ ան կամ ոչ: Բուն իսկ հարցը այս է. «Ինչպիսի՞ Աստուած մըն է այն որ կը վարէ այս աշխարհը?»

Դժբաղդաբար աշխարհի մասին մեր ծանօթութիւնը շատ անկատար է: Այ-սու հանդերձ, հիմա մարդուն հասկցած իրողութիւններէն կտրելի է կարգ մը շատ որոշ հետեւութիւններու յանգիլ: Մարդուն իրեն համար խիստ նուիրա-կան պատրանքներէն շատերը մեր ներ-կայ գիտական ծանօթութիւններուն լոյսին տակ կ'անհետանան. բայց միջ-նադարեան դաւանանքներու եւ սովմա-ներու աւերակին մէջէն դուրս կուգայ մարդկային արժանապատուութեան եւ պատասխանատուութեան նոր գիտակ-ցութիւն մը, որ հաստատ կերպով կը ծանրանայ անոր ուսերուն վրայ:

Արդի գիտութեան միջոցաւ յայտ-նուած այդ Վարիչ մէկ Բանը կատարի-լապէս համաձայն է ինքն իր մէջ եւ ոչ հա-կասական: Ան չի նմանիր սուստական իշխանի մը որ կը շարժի իր քմահաճոյք-ներուն համեմատ, շրջապատուած իր շնորհընկալներով եւ քծնող պալատա-կաններով: Տիեզերքը վստահելի բնա-կան օրէնքներու համաձայն կը զործէ: Անկենդան բնութեան ոյժերը կը զործեն առանց նկատի առնելու տեղական բը-նակչութեան բարոյական յատկութիւն-ները: Անձրեւը հաւատարապէս կը տե-ղայ թէ արդարին եւ անարդարին վրայ: Երկրաշարժը կատարեալ անկողմնակա-

լութեամբ կը քանդէ թէ հանրատունները և թէ հեկեղեցիները: Սան Ֆրանչիսկոյի 1906ի ժաթին եւ հրդեհին միջոցին ինքնազոհականի Ափին վրայ մեծագոյն զինեղործարանը կործանած թաղի մը մէջ գրեթէ անփնտռ մնաց, մինչ մօտակայ եկեղեցիները աւերակ դարձած էին:

Հին Եւրոպական գրականութեան մեծագոյն տրամին մէջ Յոր մեզի կը ներկայացուի իբր մէկը, որ կը մերժէ իր բարեկամներուն այն վճիռը՝ թէ իր զրծազգութիւններուն պատճառը իր անարդարութիւնն է: Եղիա մարգարէն քարոզեց թէ Աստուած ո՛չ սաստիկ հովին, ո՛չ երկրաշարժին և ո՛չ ալ կրակին մէջ էր: Բնութեան օրէնքները որոնք այսպիսի ազդեցութիւններ կ'արտադրեն՝ կատարելապէս անփոփոխելի եւ միօրինակ, անկողմնակալ եւ մեքենական են: Անոնք ուէ բարոյական նշանակութիւն չունին: Անոնք պարզապէս կը ջուլնեն թէ Աստուած բանական է եւ անհակասական:

Տիեզերական ոյժի շատ մը արտայայտութիւնները, սակայն, բարոյական նշանակութիւն ունենին: Գործարանաւոր աշխարհին մէջ բարոյական արժէքներու թիւը շատ մեծ է: Բոլոր փորձառութիւնը հաստատուել կը թուի այն գաղափարը՝ թէ կենդանիները իրենց արարքներուն համար պատասխանատու են: Կենսական ոյժը այնչա՛փ օրէնքին ենթակայ է որչափ որ է ձգողականութիւնը, բայց տիեզերքի շարժիչ ոյժին այս երկու արտայայտութիւնները բոլորովին տարբեր կարգերու կը պատկանին:

Երկրաբանի տեսակէտէն գիտելով շատ որոշ կերպով կը տեսնուի՝ թէ բնութեան ոյժերը ընդհանրապէս յայտնի կերպով մարդկութեան նպաստաւոր եղած են: Եթէ մարդուն համար հոս գտնուիլ «Բարի» է, անպատճառ Աստուած ալ պէտք է «Բարի» ըլլայ: Անկա-

րելի է զիպուածի վերադրել այն յիշքը զոր մարդ իր իմացական, բարոյական, հոգեկան եւ մարմնական մասնայատուկ կարողութիւններովը ներկայիս կը զբաւէ ապրող գոյութիւններու մէջ: Բնութեան ոյժերուն մէջ գտնուելու են այնպիսիներ՝ որոնք ձգտած են զէպի մարմնական, գեղագիտական եւ հոգեկան յատկութիւններու աւելի ընդարձակ կերպով արտայայտուելուն: Եթէ օրէնքի հպատակող աշխարհի մը մէջ այսպիսի յատկութիւններ կ'երեւան, անոնք այդ աշխարհին Վարչութեան ստորոգելիները պէտք է ըլլան: Արդի գիտութեան յաղթանակներով փառաւոր կերպով հաստատուած է այն կարծիքը՝ թէ մարդը ընդունակութիւն ունի նիւթական տիեզերքը շիտակ կերպով թարգմանելու: Այս մարդին մէջ կատարուած յաջողութիւնը մեզի ջաւական իրաւունք կուտայ յուսալու նոյն յաջողութիւնը միւս մարդին մէջ ալ, պայմանաւ որ նոյն միջոցները գործածուին:

Բանգի մարդ միայն հացով չ'ապրիր: Ան չի գոհանար պարզապէս գոյութիւն ունենալով, այլ նա զարմանալի կերպով կը ձգտի իր էութիւնը կազմել մարմնականէն աւելի իբր հոգեւոր նկատուած անչափելի իրականութիւններով: Ան կը փնտռէ մտածումի բանական զրութիւն մը. ան կը ճգնի գեղեցկութիւն ստեղծել, ան խարխափելով կ'ուզէ գտնել բարոյական օրէնքը, ան կը գաղափարականացնէ սէրը իբր անասնական սեռային կիրքէն բարձր եղող բան մը: Եթէ մարդը, արարածը, կ'ընէ ասոնք, ուրեմն Աստուած, արարիչ ոյժը, պէտք է նմանապէս կատարէ:

Գիտութիւնը տակաւին շատ չէ յառաջացած զԱստուած փնտռելու իր փորձին մէջ: Բայց յուսահատելու պատճառ մը չկայ: Բնականը և գերբնականը իրարմէ զատող մեծ անջրպետ մը չկայ: Առաջինը պարզապէս ամբողջին այն

մասն է, զոր մարդ կրցած է մինչև հիմա հասկնալի ընել: Երկրորդը մարդկային մտքի հասողութեան հորիզոնէն անդին կը մնայ: Կառավարութեան ամէն բաժնին մէջ, քանի որ տիեզերքի Վարչութիւնը օրէնքի համեմատ է, մարդ վստահ կերպով կրնայ յուսալ որ պիտի գայ ատեն մը երբ ան պիտի տեսնէ զայն այնպէս ինչպէս որ է:

Բայց մարդուն ինչի՞նչ կը ծառայէ այնպիսի Աստուած մը, որ պատճառ եւ արդիւնքի անխորտակելի շղթայովը սահմանուած է: Այս կախեալ է անկէ զոր մարդ կ'աշխատէ թէ իր Աստուածը ի՞նչ պիտի ընէ իրեն համար: Եթէ դուն կը փափաքիս որ Ան քեզ փրկէ քու անձնական սխալիդ կամ տղիտութեանդ բնական հետեանքներէն, շատ հաւանական է որ դուն յոյսիդ մէջ խտրութիւն եւ հեռեւեցնիս թէ արդի զիտութիւնը քու հաւատքդ յօդս ցնդեցուց: Բայց եթէ դուն կ'ուզես որ Աստուած քեզի առիթով տայ քու անձնական կեանքդ մեծագոյն արժէքին վերածելու, կամ պէտք եղած բոլոր միջոցները հայթայթէ քեզի քու բոլոր պատասխանատուութիւններդ գոհացնելու, մէկ խօսքով, «Աստուած եւ Մարդ» ընկերութեան մէջ զործադիր շահակցի մը դերը խաղալու, այն ատեն դուն ուրախութեամբ պիտի ընդունիս արդի գիտութեան քու հաւատքիդ բրած ծառայութիւնը: Այդ պարագային, յայտնի է որ մարդուն եւ ընկերութեան միւս անդամին մինչև արդիւնաւոր գործակցութիւն մը այն ատեն միայն կրնայ իրականանալ եթէ բոլոր գործառնութիւնները կառավարող որոշ կանոններ կան, այնպէս որ բոլոր ազդիւնները կարենան տրամադրուիլ գործածուելու համար:

Կրօնական միտումներու անհատը կը ջանայ է՛ն հարուստ, է՛ն ճշմարիտ, է՛ն գոհացուցիչ, է՛ն արժէքաւոր կեանքը ապրիլ, չոր իր ժառանգը եւ իր միջա-

վայրը զինքը կը թոյլատրեն ապրելու համար: Ան կրնայ տիեզերքի Վարչութիւնէն ոչ միայն որոշ չափով մը Ֆիզիկական ոյժ աշխատել, այլ նաեւ հոգեկան զօրութեան որոշ պաշար մը: Կեանքի յառաջդիմութեան ամէն մէկ աստիճանին մէջ յառաջդիմական քայլերը սովորեալ են արկածները արհամարհող պզտիկ փոքրամասնութեան մը կողմէն, որոնք մինչև հիմա երբէք չկատարուած բան մը կատարելու ջանադիր եղած են: Առիթը շատերուն տրուած էր, բայց քիչերը անկէ օգտուիլ ուզեցին: Ասոնք ունէին այդ անբացատրելի մէկ բանը, որ «աստուածային շունչ», Աստուծոյ հոգի կ'ընտւած է: Այս, ուրիշ ոեւէ կենսական կարողութեան նման, կրնայ մշակուիլ եւ զարգանալ կամ կրնայ անտեսուիլ եւ բխանալ:

Վերջապէս, վստահ կերպով կրնանք ըսել՝ թէ մարդուն համար տալի մեծ պատիւ մըն է աշխատել թէ ան իր փրկկութիւնը անձամբ պիտի իրագործէ, քան տեսնել որ ան կը յուսայ թէ կատարելութիւնը զուրէն զօրով պիտի սեպհականացնեն իրեն: Տիեզերքի Վարչութիւնը հումնիթը կը հայթայթէ, պէտք եղած ոյժը կը տրամադրէ, կարելի մեթոտներու մասին թելադրութիւն մը կը ներշնչէ, եւ ապա մարդուն կը թողու որոշել թէ փորձելու համար պէ՞տք է համարձակի թէ ոչ:

ԹՐԳՄ. Տ. Ճ. Խ.

Այսօր Եկեղեցիին պաշտօնն է շատ գրադեալ եւ արտորանքի մէջ հոգի մարդերուն տալ «այն խաղաղութիւնը չոր աշխարհը չի կրնար տալ»:

Այսօր մեր առօրեայ կեանքին մէջ բարոյական այնքա՛ն փտութեան պատճառը այն է՝ որ մենք առնական քաջութիւնը չունինք մեր ընկերութիւնէն, մեր եկեղեցիէն... դուրս վաճառելու, յանդիմանելու այն մարդիկը որոնք այս գործերը կը կատարեն:

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՎԵՐ. ԲԱՐՍԵՂ ՏՕՆԻԿԵԱՆ

Լիբանանի բարձրաբերձ Սընան լեռը մինչ իբր աներկիւղ զիշերապահը Պէյրութի և չըջակալքին, կ'աւետէր խաւար գիշերէ մը յիտոյ պայծառ ու գեղեցիկ օր մը, երկնային հրեշտակներ ալ Վեր. Բ. Տօնիկեանը Մայիս 21, առտուան ժամը 4:45ին, խաւար աշխարհիս դառն ու յոգնեցուցիչ կեանքէն կը փոխադրէին, Նոր Օրի և Կեանքի մը, ուր ոչ ցառ ոչ վիշտ կայ...

Վեր. Բ. Տօնիկեանին ծնողքը բնիկ Հաճընցի՝ Պայրամեան գերդաստանէն ըլլալով տնորոշ պարագաներու բերմամբ իրենց հայրենիքը ձգած և հաստատուած էին Կէմէրէկ, տեղացիներէն կոչուելով «Հաճըն Օղլու»:

Հանգուցեալը ծնած էր Կէմէրէկ 1852 ին. իր մանուկ հասակին մէջ սիրած է ծառայութիւնը և կրթութիւնը, հակառակ իր 12 տարեկան եղած միջոյին իր սիրելի մայրը կորսնցնելուն դարձեալ ունեցած է նոյն փափաքը. «Կարգալ ու ծառայել»:

Իր նախապատրաստական կրթութիւնը առած է տեղւոյն Ազգային վարժարանին մէջ. վերջը հոս ալ Աւետարանականութեան մուտքով յաճախեր է անոնց դպրոցը, և այդ հաստատութեան մէջ զրեր է իր ապագայ կեանքին և գործին հիմնաքարը: Յետոյ երեք ընկերներով կը զրկուին Միւնիսթիւսիւն Վեր. Գ. Էօմիւրեանէն դասեր առնելու: Ետքը յաջախեր է Կեսարիոյ Ամերիկեան վարժարանը, և ապա Մարգուտնի Աստուածաբանական ճեմարանը, ուսկից չորս տարի վերջ 1877ին չըջանաւորալ կըլլայ: 1878ին Թալատի Ամերիկ. Ազգայնց Վարժարանի ուսուցչուհիներէն Օր. Աննաի հետ կ'ամուսնանայ, որ իրենց բոլոր կենակցութեանց օրերուն մէջ իր համեստ բնուորութեամբ, քրիստոնէական բար-

ձըր կեանքովը և երիցուհիի մը կարողութեամբը աջ ձեռքը եղած է հանգուցեալին:

Աստուած ուզելով գործածել այս երիտասարդ քարոզիչը, զրկիր է ուր որ կարօտ կար փրկութեան և Աւետարանին պատգամին, և ինքն ալ իբր իրար ծառայ մը առանց տեղ առարկութեան «Ահա ես, զիս դրկէ» ըսելով պայքար է կուրծք տալով բոլոր դժուարութեանց:

Իր յինամեայ անխոնջ ծառայութիւնը իսկապէս պնահատելի է, միշտ քարոզելով, խառնչփոթ եկեղեցիները կազմակերպելով և ապիրջանիկներուն ցաւակից ըլլալով...

Պաշտօնավարած է շատ մը տեղեր, որոնցմէ կ'ուզենք յիշել մի քանիները. Միւնիսթիւսիւն, Զիլէ, Ապրիլիյէ (Սըվազ), Նէվ-Շէհր, Թալատ, Սթանոզ, Կէմէրէկ, Նիյաէ, Պէյրութ, Մէրսին, Ժիւնէ, և իր վերջին տարիներուն մէջ ալ մերթ ընդ մերթ տուեր է իր հայրական խրատն ու աւետարանական պատգամը մեր Պէյրութի եկեղեցւոյ բեմէն:

Շատ կը սիրէր իր եկեղեցին, որուն մէջ կը պաշտօնավարէր: Բոլորովին նուիրուած էր իր գործին և կ'աշխատէր ընել իր լաւագոյնը: Կէմէրէկի մէջ աշխատեցաւ նոր եկեղեցի մը կառուցանել, և չի կարենալով ընել զայն սանկ զրեց իր օրագրութեան մէջ. «Եթէ այդ եկեղեցիին շինութիւնը չտեսած մեռնիմ, աչքերս բաց կերթամ, շատ ցաւ կ'զգամ...»:

Վեր. Բ. Տօնիկեան 1903ին ձեռնադրուեցաւ Կէմէրէկի եկեղեցիին մէջ, ուր յաջորդաբար 5 տարիներ գործեց մինչև 1908:

Մտ վերջին տարիներուն մէջ թէպէտ ինկած էր ֆիզիքապէս, սակայն ունէր ներքին եռանդն ու փափաքը, խօսելու, խրատելու և պաշտամունքներուն յաճախելու:

Երբ լսեցի թէ. ա'ւ իր վերջին ժամերն են, իր քովը գացի, ինծի ըսաւ. «Եզրայր իմ, կը մեռնիմ». եւ ինծի եւ իր տիկնոջ ուղղած իր վերջին խօսքերն էին. «Ես կերթամ երկինք, ուր զիս կ'սպասեն չորս հրեշտակներս»:

Առաջուց հեռագրուած էր իր Պոլսոյ բնակ Տօքթ. զաւկին, որ շտապեր էր գալու իր սիրելի հօրը քով, սակայն զժրագրաբար միայն կրցաւ տեսնել անոր անշնչացած մարմինը:

Յուզարկաւորութեան արարողութիւններ կատարուեցան Մայիս 22 ին, իր տան մէջ, եկեղեցոյն մէջ եւ գերեզմանը, ուր ներկայ էր հոծ բազմութիւն մը:

Վեր. Բ. Տօնիկեան իր ետեւը կը թողու իր տիկինը եւ երկու զաւակները, մին բժիշկ Պոլիս, իսկ միւսը գեղադործ Գահրիէ: Տէրը մխիթարէ զանոնք եւ քաջալերէ իրենց հօրը նուիրական գործը շարունակելու:

Պէյրուք

ԵՆՈՎԹ ԿԷՕԲԿԷՕՁԵԱՆ

ՇԱՆԹԻ ԶՈՀ ՄԸ

Եղբրական մահ մը եւս պատահեցաւ Գլըրըզ խանի մէջ, սարսելով անխափր լողոր ժողովուրդին սիրտերը: Կարապետ Մեղքոնեան, Հալէպարեան 28 տարեկան Հասանպէյլիցի երիտասարդ մը, եւ երկու տարուայ ամուսին մը շանթահար կը մեռնի Գլըրըզ խանի մէջ, իր ետին անմխիթար թողնով իր մանկամարդ կինը եւ մանչ զաւակը: Հանգուցեալը գործի համար Գլըրըզ խան գացեր էր եւ հիւր եղած էր Պր. Եղէկիէլ Պարմանտահանի տունը, ուր կէսօրը կը պատահի արկածը: Երեք հոգի տան երկրորդ յարկի սենեակին մէջ կը գտնուէին, Պր. Մեղքոնեան բուխրիկի պատին կոթնած կը կայնէր, մինչ շանթ մը ահազդեցիկ որոտումով կ'իյնայ ճիշդ բուխրիկին մէջ, որուն պատը գիկակ գիծով կը ճեղքէ ծակով զէպ ի Մեղքոնեանի կայնած կէտը: Երեք հոգիներն ալ կ'զգես-

նուին անմիջապէս, ելլալքը զիչ վիշը սթափելով կը տեսնեն որ Մեղքոնեան կը վառի, օդնութիւն կը պոսան: Ժողովուրդը արդէն տեսած ըլլալով տան վրայ ինկող սոսկալի կրակը փութացեր էին զէպ ի արկածեալ վայրը: Բայց անգուտ, անոնք եկած էին շանթահարեալին անխաղած մարմինը միայն տեսնելու: Շանթը զլխէն մտած եւ ոտքէն ելած էր:

Այս զէպքը խորապէս կը ցնցէ թախած հոգիները, կը յուզէ քար սիրտերը: Արկածեալը չորս տարի առաջ սկսած էր Յիսուսի աշակերտիլ, բայց իր վերջնական ներքին խաղաղութիւնը զանելէ առաջ ունեցած էր սաստիկ պայքար մը, որմէ աւելի բիւրեղացեալ գոյրս ելած էր. այնպէս որ ամէնուն սիրելի եղած էր, իր կեանքովը վկայելով Քրիստոսի մասին: Բոլոր ժողովուրդին եւ մեծ թիւով թուրքերու մասնակցութեամբ յուրկատորութեան հանդէսը կը կատարուի Մայիս 29 ին, Հալէպէն հանգուցեալին կինը, հօրաքորը՝ Տիկ. Մ. Գունտազճրեան եւ հօրաքորջ որդին՝ Տօքթ. Փ. Յովնանեան կը փութան իրենց վերջին հրաժեշտը տալու իրենց հոգեհատորին: Պատ Գ. Թումաեան յուզեալ շեշտերով ազդեցիկ քարոզներ կուտայ եկեղեցիին եւ գերեզմանատան մէջ, խոր տպաւորութիւն ձգելով նոյնիսկ ոչ-քրիստոնեաներու վրայ: Այս առթիւ Տիկին Մ. Գունտազճեան իր շուրջը հաւաքելով իրեն հայրենակից հասանալիքները կուտայ իր մասնաւոր պատգամը, յայտնելով անոնց թէ մահը մօտ է ամէնուն, այս կամ ան ձեռով, բայց պէտք է Յիսուսի աշակերտը ըլլալ քանի որ չէ եւ առիթ ունինք տակաւին:

ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎՐ

Սուրիոյ եւ Լիբանանի Հայ Աւետ. Միութեան տարեկան ժողովը պիտի ըլլայ Օգոս. 21-28 ին, Քէսապի մէջ:

ԳԱՀԻՐԷՐԻ ՆՈՐ ՀՈՎԻՒՐ

Պատ. Հ. Համբարձումեանի մէկ տարուան համար ուսանելու նպատակով Ամերիկա ուղևորութեան պատճառաւ՝ Գահիրէի թափուր մնացած Աւետ. րեմին մէկ տարուան համար իբր քարոզիչ հրաւիրուած է Պատ. Կիրակոս Փարաճեան, որ այս տարի աւարտեց Սփուլով Ռիլիճընի աստուածաբանական դասընթացքը։ Տիկ. Փարաճեան Աթէնքի միայ իր կրօնական դաստիարակութեան դասընթացքը աւարտելու։

«ՍԻՌՈՒԼ ԱՎ ՐԻԼԻՃԸՆ»ԷՆ ՆՈՐ ՌԻՍՈՒՄԵՆԱՐՏՆԵՐ

Մայիս 31ին կատարուած է Սփուլ ամ Րիլիճընի վկայականարաշխուժի հանդէսը. Պր. Յակոբ Պետրոսեան կրօն. դաստիարակութեան մէջ յետընթացաւարտի վկայականը առած է, երկու Յոյն և Հայ մը, Պր. Կ. Փարաճեան աստուածաբանական տիպլոմներ առած են։

«ՍԻՌՈՒԼ ԱՎ ՐԻԼԻՃԸՆ»Ի ՄԱՅՐԻԿԸ ՄԵՐ ՄԷՁ

Տիկ. Մարի Սարգիսեան, դուստրը հանդուցեալ Փրոֆ. Ա. Պեղեանի, Սփուլով Ռիլիճընի սիրուած Մարիկը, ամառուան վազանձը իր սիրելիներուն հետ անցնելու համար Յունիս Զին Պէյրութ հասած է։

ԱՂԵՔՍԵՆԴՐԷԹԻ ՆՈՐ ՀՈՎԻՒՐ

Պր. Կարապետ Գըրգեաշարեան տարի մը Աթէնքի Սփուլ ամ Րիլիճընի մէջ ուսանելէ վերջ Սուրիա վերադարձած է, ստանձնելով Աղեքսանդրէի Հայ Աւետ. Եկեղեցւոյ հովուութիւնը, նախապէս եղած հրաւերին պատասխանելով։

ԺՍՄԱՆՈՒՄ

Տիկ. Պ. (Վերա Բելզանդ) Լեւոնեան, դուստրը ատամնաբոյժ Տիար Գր. Սարգիսեանի, իր երեք զաւակներով հասած

է քաղաքս, 16 տարի բաժանումէ մը վերջ իր ծնողքէն, որոնք Յունիս 7 ին ընդունելութիւն սարքելին Ալիպիէի Աւետ. Եկեղեցիի վարի որահր։

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՁԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԿԸ

Ազատ քաղաքապետ Պարո Տիլիմսի գրուածքներէն

ԳԼՈՒԽ Ա.

ՄՍՐԼԻ ՈԳԻՆ,

Գրողիբը՝ որ մինչև այն ատեն մտիկ կ'ընէր, պատանիին իրաւունք տուաւ։ «Եթէ լսու մը ես խօսիս», ըսաւ Սքուրճ խոժոռ զէմքով, «այն ատեն կրնաս պահել քու Ծնունդդ և կորսնցնել պաշտօնդ»։ Եւ ապա իր քեռորդին դառնալով «Տղաս», ըսաւ, «լեզուդ բերնիդ մէջ բաւական լաւ կրնաս դարձնել, Անգլիոյ երկաթօխանաց ժողովին անդամ կրնաս ըլլալ, ինչո՞ւ անդամ մը չես փորձեր»։

—Մի բարկանար, մօրեղբայր, ես եկայ որ քեզ մեր տունը հրաւիրեմ, վաղը կէս օրուան ճաշը միասին ընենք մեր տունը։

«Եթէ ուրիշ ըսելիք մը չունիս», պատասխանեց Սքուրճ, «կրնաս անմիջապէս մեկնել, ասանց ակնկալելու թէ կրնամ Ձեր հրաւերն ընդունիլ»։

—Բայց ինչո՞ւ, հարցուց պատանին։

«Երթաս բարով», պատասխանեց Սքուրճ։

—Քեզմէ բան մը չեմ ուզեր, բան մը չեմ ակնկալեր, ինչո՞ւ զոնէ իրարու լաւ բեկամներ չըլլանք։

«Երթաս բարով», կրկնեց Սքուրճ։

—Շատ կը ցաւիմ որ այսքան կամակոր էք։ Իրարու հետ երբէք կոռուած չէինք, ես քու սիրտդ վշտացուցած չեմ, միայն փափաքեցանք որ միասին ճաշենք, ինչո՞ւ կը բարկանաք, չեմ գիտեր, սակայն քանի որ այսօր Ծնունդ

է, ևս Ծնունդի անոյշ չգտցումովս կը մաղթեմ Զեյի Ծնորհաւոր Ծնունդ:

«Երթաս բարով»:

— Եւ երջանիկ նոր տարի:

«Երթաս բարով»:

Պատանին տրամելով գուրս ելաւ. մեկնելէ առաջ միեւնոյն մաղթանքը ըրաւ զրազրին ևս, որ, թէ քիչ մը պարզ էր, բայց Սքուրճէն շատ աւելի տաք կերպով ընդունեց ու սիրալիկ կերպով պատասխանեց:

«Ահա քեզի խնդ մըն ալ», բացականչեց Սքուրճ, որ իր զրազրին խօսքերը լսեր էր, «Շտաթը տասնհինգ շիլին եկամուտ ունի, կին մը ու ընտանիք մը հաց կ'ուզեն, ու երջանիկ Ծնունդի մասին կը խօսի, Տէ՛ր Աստուած, խենդենալս կուզայ»:

Այս յիմար զրազիրը Սքուրճի քեռորդին գուրս առաջնորդելէ յետոյ՝ երկու մարդ ներս մացուցեր էր: Ասոնց կերպարանքէն դատելով ազնուականներ ըլլալու էին. որոնք ներս մանկելով Սքուրճի ղէմը կայնեցան, իրենց գլխարկները բռնած: Զեռքերնին ունէին զրքեր ու թուղթեր:

«Կը յուսամ թէ», ըսաւ ազնուականներէն մին իր ձեռքի թղթին նայելով, «Սքուրճ և Մարլի վաճառատունը ասիլա է, արդիօք Տիար Սքուրճի՞ թէ Մարլիի հետ է որ պատիւ ունիմ խօսելու»:

— Մարլին եօթը տարի առաջ մեռաւ, պատասխանեց Սքուրճ, «Եօթը տարի առաջ ճիշդ Ծնունդի գիշերն էր որ մեռաւ»:

«Տարակոյս չունինք որ», ըսաւ ազնուականը, «Անոր առատածեռնութիւնը կ'ապրի իր կենդանի ընկերոջը վրայ», ու իր ձեռքի թուղթը Սքուրճի տուաւ:

Յիբաւի երկու ընկերները ճիշդ իրարու նման էին, «առատածեռնութիւն» բառը ըսածին պէս Սքուրճի ղէմքը գունատեցաւ, աչքերը խոժոռեցան, և առանց բառ մ'արտասանելու զլուխը շար-

ժելով թուղթը ևս տուաւ:

«Պարոն Սքուրճ», ըսաւ ազնուականը՝ զրիչը ձեռքն առնելով, «Այսպիսի առնական օրերու մէջ, անչու չա կ'ակընկալուի որ աղքատներուն ու խեղճերուն մասին քիչ մը մտածենք, շատեր կան որ այսօր սեւեռիք չոր հաց մը չունին, հազարաւորներ կան որոնք կեանքի ամենատարրական պէտքերէն զրկուած են: Ասոնց համար խորհի՛ւ պէտք է»:

(Շարունակելի) (3)

ՍՏԱՑԱՆՔ

Մանչէսթըրի հոգեւոր հովիւ Դեր. Տ. Դ. Դուրհանի «Պարզ Քարոզներ» ին Բ. Գ. և Ե. հատորները, իւրաքանչիւրին զինն է 2.6 շիլին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ

Եկեղեցական Միութիւն

ՅՕԴՈՒՄՆԵՐ

Որդիական Սիր ԹրԳ. ՏԻԿ. Վ. ՊէյեԱՆ

Աստուածասիրութեան Արդիւնք

ՎԵՐ. 2. ԿէՕՎԿԱՆՍԹԵԱՆ

Մովսիսական Օրհնիկ Ինասը

ՎԵՐ. ԵԿԲ. ՇՆՈՐԶՕՔԵԱՆ

Երբ սիրտը կը ծանրաբեռնուի

ՏՐ. 2. Ր. ՊՐԱՌԻՆ

Ս. Սանալ եւ Ս. Մեսրոպ ՅԻԿԷՆ

Դիտութեան Աստուած ԹՐԳ. Տ. Ճ. Խ.

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՆՈՐ ԱԻԵՏԱՐԵՐ

Արտօնաւէր Վեր. Կ. Յ. Թարութիւնեան Տնօրէն-Խմբագիր Տ. Ճ. Խրդեան

Տարեկան բաժնեկիւն— Սուրիա, 1.50

Սուր. ոսկի. արտասահման 1.50 տոլար:

Հասցէ—

NOR AVEDAPER, B. P. 287, ALEP, SYRIE